

**Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոն  
գրադեցնելու համար անցկացվող մրցույթի և ծառայության ծառայողների ատեստավորման  
հարցաշար**

**Հարցաշարը ներառում է հետևյալ հարցադրումները.**

**1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն.**

1. Հայաստանի Հանրապետությունը՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալ-իրավական պետություն.
2. Քաղաքական բազմազանությունը՝ որպես սահմանադրական կարգի հիմունք.
3. ՀՀ սահմանադրության ընդհանուր բնութագիրը.
4. Անձի արժանապատվության իրավունքը.
5. Կյանքի իրավունքը.
6. Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը.
7. Անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը.
8. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը.
9. Խղճի և կրոնի ազատության իրավունք.
10. Մամուլի և զանգվածային լրատվության ազատությունը .
11. Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը.
12. Իրավունքների և ազատությունների սահմանափակումը.
13. Իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը.
14. Անմեղության կանխավարկածը.
15. Օրենքի հետադարձ ուժը.
16. Օրենսդիր, գործադիր դատական իշխանության ընդհանուր բնութագիրը.
17. Բացառապես օրենքով կարգավորվող հարաբերությունները.

**2. Հայաստանի Հանրապետության օրենքը «Հատուկ քննչական ծառայության մասին»**

18. «Հատուկ քննչական ծառայության մասին» օրենսդրությունը.
19. «Հատուկ քննչական ծառայության մասին» օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները.
20. Հատուկ քննչական ծառայության ծառայողների պաշտոնների համակարգը.
21. Ծառայության անցնելու համար ներկայացվող հիմնական պահանջները.
22. Հատուկ քննչական ծառայության պաշտոնի նշանակելու պայմանները.
23. Հատուկ քննչական ծառայության ծառայողին ծառայությունից ազատելը.
24. «Հատուկ քննչական ծառայության մասին» օրենքի կարգավորման առարկան.
25. Հատուկ քննչական ծառայության խնդիրները.
26. Հատուկ քննչական ծառայության ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները.
27. Հատուկ քննչական ծառայության ծառայողների լիազորությունները.
28. Հատուկ քննչական ծառայության ծառայողների էթիկայի կանոնները.

**3. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք.**

29. Հանցագործության հասկացությունը, հատկանիշները.
30. Հանցակազմի տարրերն ու հատկանիշները.
31. Հիմնական, ծանրացնող և մեղմացնող հանցակազմերը.
32. Հանցագործությունների դասակարգումը.
33. Շարունակվող և տևող հանցագործությունները.
34. Հանցագործությունների համակցությունը. իրական և իդեալական համակցություն.

35. Հանցագործությունների ռեցիդիվը. հասարակ, վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվ.
36. Հանցագործության օբյեկտը. հասկացությունը, հիմնական և լրացուցիչ օբյեկտները, հանցագործության առարկան.
37. Հանցագործության օբյեկտիվ կողմը. հանրորեն վտանգավոր արարքը, հետևանքները ու դրանց միջև պատճառական կապը.
38. Հանցագործության տեղը, ժամանակը, եղանակը, իրադրությունը, գործիքներն ու միջոցները.
39. Հանցագործության սուբյեկտը.
40. Տարիքը՝ որպես հանցագործության սուբյեկտի հատկանիշ և հատուկ սուբյեկտը.
41. Հատուկ սուբյեկտի ընդհանուր բնութագիրը.
42. Անմեղսունակությունը, սահմանափակ մեղսունակությունը.
43. Հանցագործության սուբյեկտիվ կողմը, դրա պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները.
44. Դիտավորությունը որպես մեղքի ձև, դրա տեսակները.
45. Անզգուշությունը որպես մեղքի ձև, դրա տեսակները.
46. Մեղքի երկու ձևով կատարվող հանցագործություններ.
47. Միալը և դրա քրեաիրավական նշանակությունը.
48. Հանցափորձը և դրա տեսակները. Ավարտված և չավարտված հանցափորձ.
49. Հանցագործության նախապատրաստությունը.
50. Հանցագործությունից կամովին հրաժարվելը.
51. Հանցակցություն. հասկացությունը և ձևերը.
52. Հանցակիցների տեսակները.
53. Հանցակիցների պատասխանատվությունը, հանցակցի սահմանազանցումը.
54. Անհրաժեշտ պաշտպանություն. հասկացությունը և իրավաչափության պայմանները.
55. Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը. հասկացությունը և իրավաչափության պայմանները.
56. Ծայրահեղ անհրաժեշտությունը. հասկացությունը և իրավաչափության պայմանները.
57. Հրաման կամ կարգադրություն չկատարելը.
58. Պատժի հասկացությունը և նպատակները.
59. Պատժի տեսակները. հիմնական և լրացուցիչ պատիժներ.
60. Քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու հիմքերը.
61. Համաներում և ներում.
62. Դատվածություն.
63. Սպանության հասկացությունը. հասարակ սպանություն.
64. Սպանության ծանրացնող հանգամանքները.
65. Մեղմացնող հանգամանքներով սպանությունների տեսակները.
66. Ինքնասպանության հասցնելը և ինքնասպանության հակելը. օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի առանձնահատկությունները (տարբերությունները).
67. Դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը.
68. Ծեծի և խոշտանգման օբյեկտիվ կողմերի առանձնահատկությունները (տարբերությունները).
69. Մարդուն առևանգելու և ազատությունից ապօրինի զրկելու օբյեկտիվ կողմերի առանձնահատկությունները (տարբերությունները).
70. Բռնաբարության և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների օբյեկտիվ կողմերի ու սուբյեկտների առանձնահատկությունները (տարբերությունները).
71. Անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը.
72. Հափշտակության հասկացությունը և հատկանիշները.
73. Հափշտակությունների ծանրացնող հանգամանքները.

74. Ավագակության, կողոպուտի և գողության օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի առանձնահատկությունները (տարբերությունները).
75. Խարդախության օբյեկտիվ կողմի առանձնահատկությունները.
76. Շորթման օբյեկտիվ կողմի առանձնահատկությունները .
77. Յուրացնելու կամ վատնելու օբյեկտիվ կողմի առանձնահատկությունները.
78. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելը (փողերի լվացումը).
79. Մաքսանենգությունը.
80. Ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք ձեռք բերելը կամ իրացնելը.
81. Ահաբեկչության և պատանդ վերցնելու օբյեկտիվ ու սուբյեկտիվ կողմերի առանձնահատկությունները (տարբերությունները).
82. Բանդիտիզմը.
83. Ապօրինի կերպով զենք, ռազմամթերթ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը.
84. Հրազենը կամ ռազմամթերթն անփութորեն պահպանելը.
85. Տրանսպորտային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը.
86. Խուլիգանության օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի առանձնահատկությունները.
87. Լրտեսության և պետական դավաճանության օբյեկտիվ, սուբյեկտիվ կողմերի ու սուբյեկտների առանձնահատկությունները (տարբերությունները).
88. Դիվերսիայի և վնասարարության օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի առանձնահատկությունները (տարբերությունները).
89. Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը.
90. Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը.
91. Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելը կամ իրացնելը.
92. Ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը.
93. Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և պաշտոնեական լիազորություններն անցնելու օբյեկտիվ ու սուբյեկտիվ կողմերի առանձնահատկությունները (տարբերությունները).
94. Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը.
95. Կաշառք ստանալը.
96. Կաշառք տալը.
97. Կաշառքի միջնորդությունը.
98. Պաշտոնեական կեղծիքը.
99. Պաշտոնեական անփութությունը.
100. Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը..
101. Ինքնիրավչությունը.
102. Սուտ մատնությունը.
103. Հանցագործությունը պարտակելու և հանցագործության մասին չհայտնելու օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի առանձնահատկությունները (տարբերությունները).
104. Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը.
105. Սուտ բացատրություն, սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալը կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը.
106. Ցուցմունք տալուց հրաժարվելը.

107. Սուտ ցուցմունք, կեղծ եզրակացություն տալու կամ սխալ թարգմանության համար կաշառելը կամ հարկադրելը.
108. Դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից ցուցմունք տալուն հարկադրելը.
109. Նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը.
110. Արգելանքի տակ գտնվող կամ բռնագրավման ենթակա գույքի նկատմամբ ապօրինի գործողությունները.
111. Ապօրինի ձերբակալելը կամ կալանավորելը.
112. Ապացույցները կեղծելը.
113. Քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելը.
114. Փախուստն ազատագրվման վայրից, կալանավորվածներին պահելու վայրից կամ ձերբակալվածներին պահելու վայրից.

#### **4. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք.**

115. Քրեական դատավարության փուլերը.
116. Իրավաբանական օգնության իրավունքի ապահովումը.
117. Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.
118. Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը.
119. Դատախազը որպես քրեական դատավարության սուբյեկտ.
120. Քննիչը՝ որպես քրեական դատավարության սուբյեկտ.
121. Մեղադրյալը՝ որպես քրեական դատավարության սուբյեկտ.
122. Պաշտպան հրավիրելը, նշանակելը, փոխարինելը և վարույթին՝ նրա մասնակցելու այլ հիմքերը.
123. Պաշտպանի մասնակցության պարտադիր դեպքերը.
124. Մասնագետը և փորձագետը քրեական դատավարությունում.
125. Անձինք, որոնք չեն կարող կանչվել և հարցաքննվել որպես վկա.
126. Վկայի իրավաբանական օգնության իրավունքը.
127. Միջնորդությունների և պահանջների՝ քննության առնելու պարտադիր լինելը.
128. Ապացույցի հասկացությունը.
129. Ապացույցների թույլատրելիությունը և վերաբերելիությունը, ապացույցների ազատ գնահատումը.
130. Ապացուցման ենթակա հանգամանքները.
131. Վկայի և տուժողի ցուցմունքները.
132. Կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի և դատապարտյալի ցուցմունքները.
133. Իրեղեն ապացույցի հասկացությունը.
134. Ձերբակալման հասկացությունը.
135. Ձերբակալման հիմքերը և ժամկետները.
136. Խափանման միջոցների տեսակները.
137. Խափանման միջոցների կիրառման հիմքերը.
138. Կալանավորումը՝ որպես խափանման միջոց, կիրառման հիմքերը, ժամկետները.
139. Գրավը՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց. Էությունը, կիրառման հիմքերը.
140. Դատավարական հարկադրանքի այլ միջոցներ (պաշտոնավարության ժամանակավոր դադարեցում, բերման ենթարկել).
141. Դատավարական ժամկետները. հասկացությունը, հաշվարկը, բաց թողնված ժամկետը վերականգնելու դատավարական կարգը.
142. Քրեական գործի հարուցման առիթները և հիմքերը.
143. Քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները.
144. Քրեական գործերի միացումը և անջատումը.

145. Քրեական գործ հարուցելու , հարուցելը մերժելու կարգը.
146. Քրեական գործի նյութերով նոր գործի հարուցումը.
147. Նախնական քննության ընդհանուր պայմանները.
148. Քննչական բաժնի պետի լիազորությունները. Քրեադատավարական վերադատությունը նախաքննության մարմնում
149. Նախնական քննության ժամկետները.
150. Քննչական ենթակայություն.
151. Քննչական նրպես մեղադրյալ ներգրավելու հիմքը և կարգը.
152. Մեղադրանքի առաջադրման էությունը և դատավարական կարգը.
153. Քննչական գործողությունների կատարման ընդհանուր կանոնները.
154. Վկայի և տուժողի հարցաքննության դատավարական կարգը.
155. Հարցաքննության արձանագրությունը.
156. Կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության էությունը և դատավարական կարգը.
157. Չննության հասկացությունը, տեսակները, դատավարական կարգը.
158. Առերեսման էությունը, տեսակները և դատավարական կարգը.
159. Խուզարկության էությունը, տեսակները և դատավարական կարգը.
160. Քննման էությունը և դատավարական կարգը.
161. Առգրավման էությունը և դատավարական կարգը.
162. Ճանաչման ներկայացնելու էությունը, տեսակները և դատավարական կարգը.
163. Քննչական փորձարարություն էությունը և դատավարական կարգը.
164. Փորձաքննության նշանակման և կատարման դատավարական կարգը.
165. Նամակագրություն. փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելու, հեռախոսային խոսակցությունները լսելու էությունը և դատավարական կարգը.
166. Քրեական գործով վարույթի կասեցման հիմքերը.
167. Քրեական գործով վարույթի կարճումը՝ որպես նախաքննության ավարտման ձև և դրա հիմքերը.
168. Մեղադրական եզրակացության կառուցվածքը.
169. Դատախազի որոշումները մեղադրական եզրակացությամբ ստացված գործով.
170. Դատարանի որոշմամբ իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումները.
171. Հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների բողաքարկումը դատարան.
172. Անչափահասների գործերով վարույթի առանձնահատկությունները.
173. Դատախազի լիազորություններն անմեղսունակների գործերով նախաքննությունն ավարտելիս.
74. Հանձնումը որպես քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու հիմնական տեսակ.

#### **5. Քրեագիտություն և քրեաբանություն.**

175. Փորձառական նմուշների վերցման կարգը.
176. Չզարան-փորձագետի լուծմանն առաջադրվող հարցերը.
177. Հետքաբանական փորձաքննությամբ լուծվող հարցերը.
178. Քրեական գործերի պլանավորումը.
179. Քննչական վարկածներ.
180. Առանձին քննչական գործողությունների պլանը.
181. Դեպքի վայրի զննության մարտավարությունը.
182. Կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության մարտավարությունը.
183. Առերեսման մարտավարությունը.
184. Փաստաթղթերի զննությունը.

185. Քննչական փորձարարությունը.
186. Լուսանկարներով և տեսաժապավեններով ճանաչման ներկայացնելու առանձնահատկությունները.
187. Անձանց և դիակի ճանաչման ներկայացնելը.
188. Հանցագործության ծագմանը նպաստող հանգամանքների հետազոտումը.
189. Հանցագործության ծագմանը նպաստող հանգամանքների հայտնաբերումը.
190. Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի առանձնահատկությունները.
191. Հանցավորության որակական և քանակական ցուցանիշները
192. Հանցագործի անձը բնութագրող սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական և քրեախրավական առանձնահատկությունները.
193. Հանցագործությունների կանխման հասկացությունը և տեսակները.